ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

In the work attaching importance to the values of physical education and sport, Olympic ideology and to the principles of ,,Fair play,, we make a number of suggestions for the sportsmen, trainers, pedagogues, people who are interested in sport and for the society to be engaged in the inrichment of their professional knowledge.

ԱՐՄԵՆ ՔԹՈՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *կյանքի որակ, բնակչության որակ, բարեկեցություն, տարածքային անհամամասնություն, գլխավոր բաղադրիչների մեթոդ, կյանքի որակի ընդհանրական ցուցանիշ*

Բնակչության կյանքի որակի ժամանակակից հետազոտությունների տեսական հիմքն ինտեգրալային մոտեցումն է: Հոդվածում կյանքի որակը դիտարկվել է որպես բնակչության որակի, տնտեսական և սոցիալական բարեկեցության համադրություն: Դիտարկված տարրերից յուրաքանչյուրի համար կառուցվել է ընդհանրական ցուցանիշ՝ առաջին գլխավոր բաղադրիչի ձևափոխված մեթոդի կիրառմամբ: Կյանքի որակի գնահատումները կատարվել են ք. Երևանի և ՀՀ մարզերի համար, 1998-2015 թթ. վիճակագրական տվյալների հիման վրա: Գնահատման արդյունքներն օգտագործվել են ՀՀ-ում բնակչության կյանքի որակի տարածքային անհամամասնությունների վերլուծության համար:

Կյանքի որակի ընդհանրական գնահատումներում կարևորագույն խնդիրներ են ելակետային ցուցանիշների կազմի ընտրությունն ու հարաբերական կարևորությունն արտացոլող կշռային գործակիցների ստացումը: Այս խնդիրների լուծման տարբերակներից մեկը վիճակագրությունում հայտնի առաջին գլխավոր բաղադրիչի ձևափոխված մեթոդն է[1], որի հիման վրա իրականացրել ենք Երևանի և ՀՀ մարզերի բնակչության կյանքի որակի գնահատում՝ ըստ երեք հիմնական ուղղությունների՝ բնակչության որակ, տնտեսական բարեկեցություն, սոցիալական բարեկեցություն:

Բնակչության որակի համաթիվը: Ցուցանիշների առաջին խումբը, որ դիտարկել ենք, առնչվում է ժողովրդագրական, առողջապահական և կրթական ոլորտներին: Ըստ այդմ՝ պայմանականորեն կարելի է համարել, որ դրանք բնորոշում են մարզերում բնակչության որակը: Աղյուսակ 1-ում ներկայացված են «բնակչության որակ» խմբում ընդգրկված 12 ցուցանիշ և դրանց կշռային գործակիցները, որոնք ստացվել են վերը նկարագրված մեթոդաբանությամբ:

---

[1] Айвазян С.А. Сравнительный анализ интегральних характеристик качества жизни населения субъектов РФ. М.: ЦЭМИ РАН, 2001, 344 с.

Աղյուսակ 1

«Բնակչության որակ» խմբի ցուցանիշների կշռային գործակիցները[1]

Ցուցանիշ	Կշիռ
Բնակչության բնական աճ	0.121
Մանկամահացության մակարդակ	0.100
Բժիշկների թիվ	0.114
Գրանցված ամուսնությունների թիվ	0.085
Գրանցված ամուսնալուծությունների թիվ	0.038
Պետական նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված երեխաների թիվ	0.068
Հանրակրթական դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվ	0.062
Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թիվ	0.088
Բուհերում ուսանողների թիվ	0.106
Արվեստի, երաժշտական և գեղարվեստի դպրոցներ հաճախող երեխաների թիվ	0.079
Թատրոնների հանդիսատեսի քանակ	0.078
Թանգարանների այցելուների քանակ	0.061

Օգտագործելով վերը նկարագրված կշռային գործակիցները՝ «Բնակչության որակ» խմբի համար գնահատվել է ընդհանրական համաթիվն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի, 1998-2015 թթ. համար (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

«Բնակչության որակ» խմբի ընդհանրական համաթվի գնահատականները

	1998	2000	2002	2004	2006	2008	2010	2012	2014	2015	Աճ, %
Երևան	0,50	0,51	0,50	0,56	0,63	0,70	0,76	0,82	0.84	0.82	65.2
Արագածոտն	0,30	0,26	0,28	0,31	0,26	0,29	0,28	0,29	0.34	0.30	0.8
Արարատ	0,29	0,28	0,31	0,34	0,34	0,34	0,36	0,38	0.39	0.40	36.7
Արմավիր	0,31	0,32	0,29	0,36	0,31	0,34	0,36	0,35	0.32	0.32	0.6
Գեղարքունիք	0,34	0,31	0,33	0,45	0,35	0,37	0,33	0,36	0.33	0.32	-6.0
Լոռի	0,27	0,27	0,29	0,30	0,28	0,26	0,29	0,33	0.38	0.32	18.5
Կոտայք	0,28	0,30	0,32	0,37	0,32	0,38	0,40	0,40	0.42	0.41	48.4
Շիրակ	0,34	0,34	0,31	0,37	0,32	0,36	0,34	0,36	0.37	0.37	9.1
Սյունիք	0,42	0,41	0,39	0,39	0,36	0,42	0,38	0,38	0.39	0.43	3.1
Վայոց Ձոր	0,33	0,28	0,38	0,38	0,30	0,36	0,32	0,37	0.37	0.38	15.1
Տավուշ	0,30	0,34	0,30	0,35	0,31	0,30	0,32	0,35	0.35	0.34	13.5
Միջինը	0,33	0,33	0,34	0,38	0,34	0,38	0,38	0,40	0.41	0.40	20.0

Ստացված արդյունքներից երևում է, որ դիտարկվող ողջ ժամանակահատվածում բնակչության որակի ընդհանրական համաթվի ցուցանիշով առաջատարը Երևանն է, որտեղ ցուցանիշի բացարձակ աճը կազմել է 65%: Մարզերի մեծամասնությունում ցուցանիշը շատ ավելի համեստ աճ է արձանագրել՝ 0-15%-ի շրջակայքում: Արդյունքում, դիտարկվող տարիների ընթացքում բնակչության որակի համաթվի արժեքի միջին աճն ըստ ք. Երևանի և մարզերի կազմել է 20%, ինչը, բնականաբար գոհացուցիչ համարվել չի կարող:

[1] Աղյուսակներում ներկայացված են ՀՀ ԱՎԾ տարածքային վիճակագրության տվյալների հիման վրա հեղինակի կողմից կատարված գնահատումների և հաշվարկների արդյունքները:

Տնտեսական բարեկեցության համաթիվը: ՀՀ մարզերում բնակչության տնտեսական բարեկեցության մակարդակի գնահատման համար օգտագործել ենք 16 ցուցանիշ: Աղյուսակ 3-ում ներկայացված են խմբում ընդգրկված ցուցանիշներ և դրանց համար ստացված կշռային գործակիցներ:

Աղյուսակ 3

«Տնտեսական բարեկեցություն» խմբի ցուցանիշների կշռային գործակիցները

Ցուցանիշ	Կշիռ
Համախառն թողարկումը մեկ բնակչի հաշվով	0,127
Մշակող արդյունաբերության տեսակարար կշիռն արդյուն. արտադրանքի կառուցվածքում	0,076
Արդյունաբերության տեսակարար կշիռը համախառն թողարկման կառուցվածքում	0,045
Համախառն թողարկումը տնտեսությունում մեկ զբաղվածի հաշվով	0,041
Հիմնական միջոցների գործարկումը տնտեսությունում մեկ զբաղվածի հաշվով	0,073
Բնակչությանը մատուցված ծառայությունները (մեկ բնակչի հաշվով)	0,078
Բնակչությանը մատուցված ծառայութ. մասն. համախառն թողարկման կառուցվածքում	0,035
Մանրածախ առևտրի շրջանառությունը (մեկ բնակչի հաշվով)	0,059
Առևտրի կազմակերպությունների քանակը (հազար բնակչի հաշվով)	0,026
Մանրածախ առևտրի շրջանառությունը մեկ կազմակերպության հաշվով	0,022
Սպառողական գների ինդեքսը	0,044
Արտաքին առևտրի շրջանառությունը (մեկ բնակչի հաշվով)	0,052
Արտահանման մասնաբաժինը արտաքին առևտրի շրջանառության կառուցվածքում	0,036
Միջին ամսական հարաբերական աշխատավարձը	0,118
Սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով	0,103
Բազմաբնակարանային շենքերի բնակարանների շուկայական միջին գները	0,065

Օգտագործելով վերը բերված կշռային գործակիցները՝ կառուցվել և հաշվարկվել են բնակչության տնտեսական բարեկեցության համաթվի արժեքներն ըստ Երևանի և ՀՀ մարզերի, 1998-2015 թթ. համար (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Տնտեսական բարեկեցության համաթվի գնահատականները

	1998	2000	2002	2004	2006	2008	2010	2012	2014	2015	աճ, %
Երևան	0,25	0,30	0,34	0,50	0,63	0,78	0,72	0,84	0.92	0.94	274.6
Արագածոտն	0,14	0,15	0,16	0,18	0,23	0,29	0,30	0,39	0.40	0.43	216.2
Արարատ	0,16	0,18	0,20	0,24	0,27	0,34	0,32	0,41	0.48	0.54	229.3
Արմավիր	0,12	0,14	0,13	0,17	0,21	0,29	0,27	0,34	0.38	0.44	262.2
Գեղարքունիք	0,12	0,15	0,13	0,16	0,19	0,26	0,22	0,29	0.34	0.37	203.6
Լոռի	0,15	0,19	0,21	0,27	0,29	0,33	0,33	0,39	0.43	0.49	229.7
Կոտայք	0,18	0,21	0,24	0,28	0,32	0,35	0,33	0,48	0.46	0.53	196.9
Շիրակ	0,14	0,15	0,16	0,19	0,22	0,29	0,29	0,39	0.38	0.42	205.4
Սյունիք	0,13	0,15	0,18	0,27	0,36	0,43	0,48	0,51	0.57	0.61	371.7
Վայոց Ձոր	0,16	0,16	0,16	0,22	0,29	0,35	0,28	0,38	0.45	0.50	216.7
Տավուշ	0,14	0,16	0,18	0,21	0,22	0,28	0,27	0,33	0.40	0.42	190.4
Միջինը	0,15	0,18	0,19	0,25	0,30	0,36	0,35	0,43	0.47	0.52	236.6

Ստացված արդյունքներից բխում է, որ տնտեսական բարեկեցության համաթվի ցուցանիշով ևս հանրապետությունում առաջատարը Երևանն է: Ընդ որում, ի տարբերություն բնակչության որակի համաթվի արժեքների, այս պարագայում Երևանի և ՀՀ մարզերի միջև տարբերությունները շատ ավելի ընդգծված են: Տնտեսական բարեկեցության համաթվի միջին արժեքը հանրապետությունում կազմել է 0.52: Մարզերի մեծ մասի դեպքում տնտեսական բարեկեցության համաթվի արժեքները ստացվել են միջինից ցածր: Միջինից բարձր մակարդակ է արձանագրվել նաև Սյունիքի, Կոտայքի և Արարատի մարզերում: Հատկանշական է, որ դիտարկվող ժամանակահատվածի սկզբում՝ 1998 թ-ին, տնտեսական բարեկեցության համաթվի արժեքների ցրվածությունն իրենց միջինի շուրջ շատ ավելի փոքր էր:

Սոցիալական բարեկեցության համաթիվը: ՀՀ մարզերում բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակի գնահատման համար օգտագործել ենք 13 ցուցանիշ, որոնց նկարագրությունն ու կշռային գործակիցները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Սոցիալական բարեկեցության ցուցանիշների կշռային գործակիցները

Ցուցանիշ	*Կշիռ*
Գրանցված հանցագործությունների քանակ	0,086
Գործազրկության մակարդակ	0,057
Զբաղվածների մասնաբաժինն աշխատանքային ռեսուրսների կառուցվածքում	0,025
Նպաստառու ընտանիքների թիվ	0,091
Կենսաթոշակառուների թիվ	0,042
Տնտեսական ակտիվության մակարդակ	0,031
Սննդամթերքի վրա կատարված ծախսերի մասնաբաժինը տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կառուցվածքում	0,094
Բնապահպանական օրենսդրության խախտումների քանակ	0,064
Մթնոլորտային արտանետումներն անշարժ աղբյուրներից	0,075
Բնակարանների և բնակելի տների գազաֆիկացման մակարդակ	0,062
Աղքատության մակարդակ	0,258
Մեկ բնակչի ապահովվածությունը բնակմակերեսով	0,028
Միգրացիայի մնացորդ	0,087

Աղյուսակ 5-ում բերված կշռային գործակիցների հիման վրա հաշվարկվել են Երևանի և մարզերի բնակչության սոցիալական բարկեցության մակարդակը գնահատող համաթվի արժեքները (աղյուսակ 6):

Սոցիալական բարեկեցության համաթվի արժեքների դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության մարզերում և Երևանում բնակչության սոցիալական բարեկեցության աճը տնտեսական բարեկեցության աճի համեմատ շատ ավելի համեստ է եղել: Այսպես՝ սոցիալական բարեկեցության համաթվի արժեքի առավելագույն աճը դիտարկվող ողջ ժամանակահատվածում գրանցվել է Երևանում՝ ընդամենը 71%, իսկ ըստ բոլոր մարզերի և Երևանի աճի միջին մեծությունը կազմել է 35.6%:

Ուշագրավ է նաև, որ սոցիալական բարեկեցության համաթվի ցուցանիշով հանրապետությունում առաջատարը Երևանը չէ՝ ի տարբերություն նախորդ երկու համաթվերի:

Եվ բացի այդ, համաթվի արժեքները, ըստ բոլոր մարզերի և Երևանի, բավականաչափ մոտ են իրար, ինչը նշանակում է, որ հանրապետությունում առկա է բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակի որոշակի համահարթեցում:

Աղյուսակ 6

Սոցիալական բարեկեցության համաթվի գնահատականները

	1998	2000	2002	2004	2006	2008	2010	2012	2014	2015	աճ, %
Երևան	0,42	0,43	0,47	0,60	0,64	0,70	0,70	0,73	0.71	0.72	71.0
Արագածոտն	0,62	0,60	0,67	0,66	0,72	0,76	0,74	0,78	0.76	0.75	20.9
Արարատ	0,53	0,55	0,56	0,65	0,73	0,78	0,71	0,75	0.74	0.77	45.7
Արմավիր	0,58	0,56	0,63	0,70	0,76	0,83	0,80	0,77	0.79	0.80	37.5
Գեղարքունիք	0,57	0,53	0,61	0,64	0,69	0,73	0,63	0,65	0.64	0.63	11.9
Լոռի	0,37	0,33	0,42	0,49	0,53	0,61	0,51	0,53	0.56	0.56	48.7
Կոտայք	0,45	0,44	0,51	0,60	0,67	0,73	0,63	0,64	0.64	0.67	48.8
Շիրակ	0,36	0,30	0,35	0,47	0,55	0,61	0,54	0,58	0.60	0.59	66.5
Սյունիք	0,48	0,49	0,52	0,58	0,65	0,72	0,68	0,69	0.71	0.69	45.5
Վայոց Ձոր	0,64	0,64	0,63	0,67	0,75	0,77	0,70	0,73	0.76	0.79	24.0
Տավուշ	0,57	0,53	0,56	0,60	0,63	0,70	0,65	0,66	0.59	0.59	4.5
Միջինը	0,51	0,49	0,54	0,61	0,67	0,72	0,66	0,68	0.68	0.69	35.6

Դիտարկվող ցուցանիշով մարզերի շարքում ակնհայտ հետնապահներն են Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերը, ինչը հիմնականում պայմանավորված է նշված մարզերում սոցիալական բարեկեցության համաթվի առանցքային բաղադրիչների՝ գործազրկության և աղքատության ցուցանիշների բարձր մակարդակով:

Տարածքային զագացման քաղաքականության ուղենիշների հստակեցման, տարածքային զարգացման նպատակների կենսագործումն ապահովող հենքային նախապայմանների դիտարկման տեսանկյունից, կարևոր նշանակություն ունեն տարածքային զարգացման անհամամասնությունների գնահատման ցուցանիշների մշակումը և կիրառումը: Տարածքային զարգացման անհամամասնությունների գնահատման նպատակով կարելի է օգտագործել տարածքների զարգացման առանձին ուղղությունները բնութագրող ցուցանիշների վարիացիայի գործակիցը: Այսինքն՝ որպես հիմք կարելի է ընդունել հետևյալ բանաձևը.

$$v = \frac{\sigma}{\bar{x}} = \frac{\sqrt{\frac{1}{N}\sum_{j=1}^{N}\left(x_j - \bar{x}\right)^2}}{\bar{x}} \qquad (1)$$

որտեղ σ - ն զարգացման ցուցանիշի միջին քառակուսային շեղումն է, $\bar{x}$ - ն զարգացման ցուցանիշի միջին մեծությունն է ըստ բոլոր տարածաշրջանների (տվյալ դեպքում՝ վերլուծության մեջ ներառված մարզերի), X_j-ն զարգացման ցուցանիշի արժեքն է j-րդ մարզում:

Որքան մեծ է վարիացիայի գործակիցը, այնքան մեծ են տարածքային զարգացման անհամամասնությունները: Այս բանաձևի կիրառմամբ հաշվարկվել են տարածքային զարգացման անհամամասնությունները ՀՀ-ում: Հաշվարկները կատարվել են ըստ բնակչության որակի, տնտեսական և սոցիալական բարեկեցության համաթվերի արժեքների:

Ըստ որում, քանի որ, ինչպես արդեն համոզվեցինք, Երևանի և հանրապետության մյուս մարզերի միջև հատկապես տնտեսական զարգացումը պայմանավորող ցուցանիշների մասով կան էական տարբերություններ, ուստի տարածքային տնտեսությունների զարգացման անհամամասնությունների գնահատումներում օգտագործվել են վարիացիայի երկու ցուցանիշներ՝ v_{11} և v_{10}: Առաջինը բնութագրում է հետազոտվող ցուցանիշի վարիացիան ըստ ՀՀ բոլոր մարզերի և Երևան քաղաքի: Երկրորդում հաշվարկներն արված են առանց Երևանի տվյալների, այսինքն՝ այն բնութագրում է հետազոտվող ցուցանիշի վարիացիան ՀՀ 10 մարզերի համար:

Աղյուսակ 7-ում ներկայացված են բնակչության որակի, տնտեսական և սոցիալական բարեկեցության համաթվերի համար հաշվարկված v_{11} և v_{10} գործակիցների արժեքները՝ 1998-2015 թթ. ժամանակահատվածի համար:

Աղյուսակ 7

Երևանի և ՀՀ մարզերի զարգացման անհամամասնությունների դինամիկան՝ ըստ կյանքի որակի բաղադրիչ համաթվերի

		1998	2000	2002	2004	2006	2008	2010	2012	2013	2014	2015
Բնակչության որակ	v_{11}	0,19	0,21	0,18	0,18	0,28	0,30	0,34	0,34	0.35	0.34	0.35
	v_{10}	0,13	0,14	0,11	0,11	0,09	0,13	0,10	0,08	0.09	0.08	0.12
Տնտեսական բարեկեցություն	v_{11}	0,23	0,26	0,29	0,37	0,40	0,39	0,38	0,33	0.30	0.31	0.27
	v_{10}	0,12	0,12	0,18	0,19	0,20	0,14	0,21	0,16	0.15	0.15	0.15
Սոցիալական բարեկեցություն	v_{11}	0,18	0,21	0,17	0,11	0,11	0,09	0,12	0,11	0.11	0.11	0.12
	v_{10}	0,18	0,21	0,17	0,12	0,11	0,09	0,13	0,12	0.12	0.11	0.12

Կարելի է տեսնել, որ բնակչության որակի համաթվի արժեքների անհամաչափությունը դիտարկվող տարիների ընթացքում մեծացել է, իսկ v_{10}-ի դեպքում՝ նվազել: Սա նշանակում է, որ Երևանի և հանրապետության մարզերի բնակչության որակը կազմող ցուցանիշների մակարդակների միջև խզումը գնալով աճում է, իսկ 10 մարզերի ներսում՝ նվազում: Այսինքն՝ բնակչության կյանքի որակի կրթական, ժողովրդագրական, առողջապահական բաղադրիչները մարզերի ներսում համահարթեցվում են, իսկ մարզերի ու մայրաքաղաքի միջև՝ ավելի տարանջատվում:

Տնտեսական բարեկեցության անհամաչափության աստիճանը հանրապետության մարզերում ևս շարունակում է աճել: Ընդ որում, ՀՀ մարզերի և Երևանի բնակչության տնտեսական բարեկեցության մակարդակների տարբերությունը մեծանում է շատ ավելի արագ տեմպերով, քան դա տեղի է ունենում ՀՀ 10 մարզերի ներսում: Մյուս կողմից, բնակչության սոցիալական բարեկեցության մակարդակներն ըստ մարզերի ու Երևանի դիտարկվող ժամանակահատվածում որոշակի չափով համահարթեցվել են, ընդ որում, նկատելի է հանրապետության ներսում սոցիալական բարեկեցության անհամաչափության ավելի ցածր աստիճան, քան առկա է տնտեսական բարեկեցության և բնակչության որակի պարագայում:

АРМЕН КТОЯН

ТЕРРИТОРИАЛЬНЫЕ ДИСПРОПОРЦИИ КАЧЕСТВА ЖИЗНИ НАСЕЛЕНИЯ В РА

Ключевые слова: *качество жизни, качество населения, благосостояние, территориальная диспропорция, метод главных компонент, интегральный показатель качества жизни*

Теоретической основой современных исследований качества жизни населения является интегральный подход. В статье качество жизни рассмотрено в рамках обобщения показателей качества населения, экономического и социального благосостояния. Для рассмотренных элементов, на основе модифицированного метода первой главной компоненты, построены интегральные показатели. Оценка качества жизни населения проведена для г. Еревана и регионов Армении, на основе региональной статистики с 1998 по 2015гг. Результаты оценки использованы для исследования региональных диспропорций качества жизни населения в РА.

ARMEN KTOYAN

TERRITORIAL DISPROPORTIONS OF LIFE QUALITY OF THE POPULATION IN RA

Key words: *quality of life, quality of the population, welfare, territorial disproportion, principal component analysis, integrated indicator of life quality*

The theoretical basis of modern researches of the population's life quality is integrated approach. In article the quality of life is considered within generalization of indicators of quality of the population, economic and social welfare. For the considered elements, on the basis of the modified method of the first principal components, integrated indicators are constructed. Assessment of the population's life quality is carried out for Yerevan and regions of Armenia, on the basis of regional statistics from 1998 to 2015. The results of assessment are used for a research of regional disproportions of quality of life of the population in RA.

ՍՈՖՅԱ ՕՀԱՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ԶԼՄ-Ն ՈՐՊԵՍ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՆ

Հիմնաբառեր. *ԶԼՄ, մանիպուլյացիա, տեխնոլոգիա, տեղեկատվություն, գաղափարախոսական և սոցիալ-հոգեբանական ներգործության միջոցների համակարգ, աշխարհընկալում*